

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար

ճարեկան ֆրբ. 10


վեցամսեայ " 5

Արտասահման

ճարեկան ֆրբ. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Եթե կ'ազեմք «Հայեղի»-ին մեջ աղոտ երևնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

Կ Ի Պ Ր Ո Ս



ԽՏԻՎԻՆ, ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Նիքոսիա 19 | 31 Հոկտ.

Ընտոյս 10 | 22, երկուշաբթի գիշեր լուսնալու մօտ, Լարնաքայի առջև խարիսխ ձգեց էջ Մահրուսէ չոգենաւր, որով կը գտնար խտիվը իր եւրոպայ կատարած ուղեւորութենէն: Ատուան չոգենաւր ցամաք իջնելով՝ հանդիսաւոր կերպով ընդունուեցաւ, եւ կառք նստելով՝ գնաց փողոցի թէքէ մը, աղօթելու: Ահրազարծին թէյ խմեց Լարնաքայի կառավարչին տունը, և իրիկունը չոգենաւ գարձաւ աստղնորդութեամբ ընդհ. կառավարչին: Երեքշաբթի աստու, Ն. Բարձրութիւնը դարձեալ ցամաք իջաւ և աստիկան դիտողներէ շրջապատուած՝ ուղեւորեցաւ Նիքոսիա: «Էյլէնձէ» դիւղին մօտ ձամրուն վրայ կանգնած տեսնուեցան մեր Ազգ. Որբանոցին աշակերտները, իրենց դպրոցական համալգեստով: Երբ կառքը մօտեցաւ՝ աշակերտները սկսան երգել, խտիվն ու ընդհանուր կառավարիչը բարենեցրով ընդունեցին անոնց յարգանքը:

Երբ Աքրօքօլի սրճարանին առջև կը գտնուէր թափօրը, հոն, մեծ բազմութեան մը առջև բոլոր բաղաբին եւ մասնաւորապէս յոյն հասարակութեան կողմէ տեղի ունեցաւ ընդունելութիւնը: Թաղապետութեան նախագահ Պ. Իլիասիտիս բարի գալուստ մաղթեց յունարէն աստնախօսութեամբ մը, զոր թուրքերէնի թարգմանեց Ահպրոսի առաջին թարգման Արիստոքոմ էֆ. Իւթիւճեան: Ն. Բարձրութիւնը ֆրանսերէն լեզուով պատասխանեց, շնորհակալութիւն յայտնելով բաղաբիս հասարակութեան:

Հինգշաբթի իրիկուն ընդհ. կառավարչին կատարելիք ընդունելութեան ասիլը հրաւերելու բաղաբիս ժողովրդին, և բազմաթիւ անձեր, ամէն ազգէ, հոն երթալով ասիլ ընկնելու իրենց յարգանքը մատուցանելու Բարձր. Հոն էին նաեւ մեր նորընտիր Առաջնորդը, Երուսաղէմ միաբաններէն Պետրոս Ա. Սարաճեան, որ երկու օր առաջ բաղաբս հասեր էր, և բաղաբիս հայ բահան: Ն. Բարձրութիւնը ամեն ազգի հասարակութեանց գլխաւորներուն հետ խօսակցեցաւ և իրեն եղած յարգանաց համար շնորհակալութիւն յայտնեց: Ընտոյս 26ին մեկնեցաւ Լիմասօլի նաւահանգիստը, եգիպտոս գտնալու համար:

* * *

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Պատրիարքարանի կողմէ այս շաբթուանոր շրջաբերական մը ղրկուած է Թագ. Խորհուրդներու և գաւառային առաջնորդներու. այս շրջաբերականով Կեդր. Վարչութիւնը կոչում կընէ հայ ժողովրդեան կարեկից ըզգացումներուն և նպաստ կը խնդրէ կարելի եղածին չափ փութով գումարական օգնութիւն հասցնելու համար հեռաքնակ կարօտ ազգայիններուն:

— Երուսաղէմի Պատրիարք Տ. Յարութիւն Սրբազան ձեռնհաս իշխանութեան դիմելով արտօնութիւն խնդրած է Սիօն կրօնաթերթի վերստին հրատարակմանը՝ վանքին տըպարանէն:

— Արքունի ճարտարապետ Սարգիս պէյ Պալեան անցեալ կիրակի առաւօտ Գուրու շէշմէի դէմը գտնուած իր շինած կղզեակի բնակարանին մէջ սրտի կաթուածէ մեռեր է: Հանգուցեալը որ 70 տարեկան էր, արքունական հոյակապ շինութիւններ կատարած ու մեծ համբաւ և հարստութիւն շահած է, և որքան իր գեղարուեստական տաղանդը պատիւ բերած է Հայութեան օտարներու առջեւ, սակայն ազգը եւ ազգային հաստատութիւնները պէտք եղածին պէս օգտուած չեն իրմէ իբրեւ մեծահարուստ հայ: Անգամ մը միայն հոգելոյս Ներսէս Պատրիարքի դիմումին վրայ՝ 1500 ոսկի վճարած է Պատրիարքարանի պարտքին հատուցմանը համար:

— Բերայի աւագերէց Տ. Յովհաննէս քահանայ Մկրեան շաբաթ մըն է եղեր թիւօէ կը տառապի և հինգշաբթիէն ի վեր ծանրացած է վիճակը:

— Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը վերջնապէս որոշեր է նոյն հաստատութեան ներքին Տնօրէնութիւնը յանձնել կարող բժշկի մը:

— Հուկայի Թագ. Խորհուրդը Ազգ. Հիւանդանոց ղրկած է տեղացի երկու որբեր, որոնց բոլոր ճամբու. ծախքը վճարելէ զատ, Հիւանդանոցի սնտուկին ալ երկու ոսկի նուիրած է:

— Էջմիածնէն կը գրեն թէ Սինոդը խնդրեր է Կովկասի կառավարչապետի թոյլտուութիւնը՝ գնելու Յարութիւն փարաշանեանեանցէ 10,500 ռուբլի արժողութեամբ գետին մը՝ Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրանոցի համար կրպակներ շինելու. նպատակաւ:

— Մայր Աթոռի Տպարանական ժողովի անդամ Ղազար սարկաւազ՝ Հայրապետական թոյլտուութեամբ Դորպատի համալսարանը ուղեւորներ է, ուր բարձրագոյն կրթութիւն պիտի ստանայ Պ. Մանթաշեանի ծախքով:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

Կիրակի օրը երկու մասնաւոր կառախումբեր Սօֆիայէն ճամբայ ելան դէպ ի Կորնօ. Օրէհովիցա, ուր տեղի պիտի ունենար բացման արարողութիւնը Ռոման. Բլէժնա. Շուկա նոր գիծին: Այդ երկու կառախումբերը որոնց մէջ կային Սպարանիէի անդամները, նախարարները, հիւպատոսները եւ հրաւիրեալներ, առջի օրը հասան Կորնօ-Օրէհովիցա: Քիչ ետքը ժամանեց նաեւ Փէրտինանտ իշխանը: Հանդէսը սկսաւ գոհաբանական աղօթքով մը որ կայարանին առջեւ կատարուեցաւ. յետոյ իշխանը բացուած հուշակեց նոր գիծը: Կէս օրին սեղան տրուեցաւ բոլոր հրաւիրեալներուն, որոնք քիչ ետքը Բլէժնա գացին, ուր հանդէս մը կազմակերպուած էր ի պատիւ անոնց: Հոն ալ իրիկուան սեղան մը տրուեցաւ եւ ապա հրաւիրեալները Սօֆիա դարձան:

ԵՐԿՈՒՔՆ ԱԼ

Ամուսնացողը կը զղջայ թէ ամուսին.
 — Երկուքն ալ:
 Աղա՞մ խաբուեցաւ սատանայէն թէ ԳԼԱ.
 — Երկուքն ալ:
 Արու ծնե՞լը փափագելի է թէ էգ.
 — Երկուքն ալ:
 Պ. . . ի հոգաբարձութիւնը իր պաշտօնին
 անգիտակից է թէ դասատուն.
 — Երկուքն ալ:
 Խաբողը յանցաւոր է թէ խաբուողը.
 — Երկուքն ալ:
 Ժուռնալ տը Սալլանթը ին խմբագրապե՞-
 տը կը հայհոյէ թէ անոր յօկօյ խմբագիրը.
 — Երկուքն ալ:
 Էպրոս տուտուն անիրաւ է թէ հարսը.
 — Երկուքն ալ:
 Տիւզը փեսասկար է թէ մաստիգան.
 — Երկուքն ալ:

ՆՈՐ—ԱՅՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

ԱՅԱՆՍ ԲՈԺՈՅԻԿ ԵՒ ԸՆԿ.

Լոնտոն

Փորը մենծ վարժապետը իրեններուն
 ձեռքէն տիւպառայով մը օձիքը ազատած՝
 շունչը հոս առաւ: Կըսուի թէ խնդրագիր մը
 պիտի տայ Մարիամ տուտունին, պաշտօնի մը
 անցնելու համար անոր . . . խոհանոցին մէջ:

Պուրկազ

Առնեմ չտամը վարժարանէն հեռացը-
 նելու մասին տրուած որոշումը մեծ ուրախու-
 թիւն պատճառեց: Որոշուեցաւ նաեւ վար-
 ժարանին ներսն ու դուրսը բիրէճով և ասիտ
 ֆինիքով աղւլաւ ընել, տարիէ մը ի վեր հոն
 որջացեալ երկպառակութեան միբրոպները ան-
 հետացնելու համար:

Վառնա

Ընդամենը ԵՐԿՈՒՔ ՈՒ ԿԷՍ անձնաւո-

րութենէ բաղկացած Նազարբէկի համակիրը
 ուրախ զուարթ հոս կը նստին հոն կը ցատ-
 կեն «Հնչակի վերելումին պատճառաւ:

Ուլիցա Չէրբուվա

Տարի մը առաջ տիկնանց մասնախումբ մը
 Պ. ներկայացուցիչին յանձնած է եղեր 60
 ոսկիի գումար մը, որ հակառակ օրինաց մին-
 չե ցարդ օռկան թերթին միջոցաւ հրատա-
 րակուած չըլլալուն, մասնախումբը միայն
 սիւ կասկածիէն բռնուած՝ յուսահատ ո-
 րոշեր է գործէ բաշուիլ:

Ուլիցա Արմէնքա

Շաբէեանք մտադիր են ցուակցական
 հեռագիր մը ուղղել իրենց բաղդակից Ար-
 շալոյսեաններուն:

Օգերուն յանկարծակի փոխուելուն պատ-
 ճառաւ կուսակցութեան մը ներկայացուցիչը
 հարբուխէն բռնուած ըլլալով, իր շուրջը
 գտնուողներուն ալ բիթերը ակամայ վազել
 սկսան:

Ուլիցա Մուսիլա

Գաղտնի ժողովի մը մէջ որոշուեցաւ մէկ
 բանի պարօններու առաւ-փախաւական ա-
 րարքը բնագատողները մատնիչ անուանել ու
 ժողովուրդի միամիտ դասակարգին մէջ այն-
 պէս տարածայնել: Նոյն ժողովին մէջ որոշ-
 ուեցաւ յայտարարել նաեւ թէ՛ ամեն անհատ
 պարտաւոր է յարել ոչ թէ յեղափոխութեան,
 այլ անոր վարիչներու . . . քմահաճոյքին:

Շուվա

Հոս աւագերէցի փոքրերէցի տիտղոսա-
 կան կոիւ մը սկսաւ, նախաձեռնութեամբ
 տեղ մը հանդարտ չի նստող նոր վերագար-
 ձողին: Խնդիրը այն աստիճան կարեւորութիւն
 ստացաւ որ ՏԱՎՈՅՈՒՄ տեսակէն—հեռու պա-
 հոցս երեք խաթըլ էքմէք խաթալիֆի պէս—
 նամակով մը գրուեցաւ Պատրիարքարան:
 Ժողովուրդը անհամբեր կ'սպասէ տեսնելու
 համար թէ եկեղեցիին Ա. դասը երկու տէր-
 պապաներէն որի՞ն վրայ կ'էճիլ պիտի գրուի:

ԶԱՆԱԶԱՆՔ



Զուրիցերիոյ մէջ դպրոցէն բացակայ
մնացող մանչ մը կամ աղջիկ մը դրա-
մական տուգանքի կենթարկուի: Հի-
ւանդութեան ատեն ներելի է. բայց
երբ հաստատուի թէ սուտ—հիւանդ է,
կառավարութիւնը բժիշկ կը զրկէ և ե-
թէ այդ կաւածը հաստատուի, այն ա-
տեն իր ծնողքը բժիշկին այցելագիրնը
վճարել կը պարտաւորին:

— Լոնտոնի մէջ 400 կ'օնական, 47
բժշկական և 23 իրաւագիտական թերթ
և հանդէս կը հրատարակուին:

— Նիւ Եօրքի Բնական պատմութեան
թանգարանը թիթեռնիկներու հաւա-
քածոն՝ իր տեսակին մէջ աշխարհիս է՛ն
ընտիրներէն մէկն է. ասոնց նմայշները
հաւաքուած են երկրագունտիս ամէն
մասերուն մէջ, շատ մը մասնագէտ հա-
ւաքիչներու միջոցով:

— Ռուսիոյ արքայական գաւազանը
զսւտ ոսկիէ շինուած է և երեք անգլի-
ական ոսք (մէկ մէդր) երկայնութիւն
ունի, վրան բանուած զարդարանքնե-
րուն մէջ պետեղուած են 268 հատ ա-
գամանդ, 360 հատ սուտակ (եագութ)
և 15 հատ զմրուխտ:

— Նորվեկիոյ մէջ էրկ կ'իկ միա-
սին երկաթուղիով ճամբորդելու համար
փոխանակ երկու տոմսակ գնելու, մի-
այն 1½ տոմսակի գին կը վճարեն:

(Աղէկ ա՛, իրենց էրիկ—կնիկ ըլ-
լալը ի՞նչպէս կը հասկցնեն Սթասիօնի
մարդուն: Ծ. Խ.)



ԳՐԶԻ ԶԲՕՍԱՆՔ



ԿԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Ա. Ս. Մ. Կ.

Պօղոս Առաքեալ ըսած է որ եթէ կար-
գուիք աղէկ կընէք: Ըսած է նաև որ եթէ
չի կարգուիք աւելի աղէկ կընէք:

Այս հակասական խօսքերն իրարու հետ
հաշտեցնելու և Պօղոս Առաքեալն ալ սուտ
հանելու համար սա տասներկու կարեւոր խը-
րատները կուտամ:

1. Առաջին անգամ երբ նշանածիդ տու-
նը երթաս, խրմալը մի՛ երեւար:

2. Ընդհակառակն հետեւալ այցելու-
թեանց շէնք շնորհք ձախաւելութիւններ ըրէ:

3. Բայց չըլլայ որ կեղծամդ սրահին
ձեղունէն կախուած ջահին կառչի:

4. Կամ ձախաւելութեամբ՝ նօթայի մը
թերթերը թղթատած միջոցիդ՝ դաշնակին
յախճապակեայ անօթը կոտրես:

5. Կամ անզգուշութեամբ զօքանչիդ
սենեակը մտնես:

6. Նայէ որ արիւն քրտինք մտնելու
չափ զօքանչիդ հետ պարես:

7. Նշանածդ ալ երբ զարմիկին (ֆուլէն)
հետ պարէ, դուն ան կողմը շատ մի՛ նայիր:

8. Երբ աներդ պարապ խօսքերով գը-
լուիդ կուռեցնէ, նշանածդ ալ շուրին հետ
կը խաղայ, դուն շուրին մի՛ նախանձիր:

9. Սրահին պատկերները գովէ՛. եթէ
ընտանեաց պատկերները տգեղ անգամ ըլ-
լան, միշտ գովէ կամ շտեմնելու դարկ:

10. Նայէ որ սիկարներդ հաւնեցնես
աներդդ, ձերմակեղէնդ՝ զօքանչիդ, շնորհա-
լից կոտրտուելներդ՝ նշանածիդ, նուէրներդ
ալ՝ բոլոր ընտանիքին:


11. Երբէք մի՛ քններ թէ նշանածիդ
գոհարեղէնները կե՞ղծ են թէ ստոյգ:

12. Գործերուդ համար բնաւ մի՛ գան-
գատիր, ընդհակառակն միշտ գովէ թէ լաւ

Վիճակի մէջ են. և ապացուցանելու համար զայն, դրամօժիտը համարուելու ատեն բիշ վը խաբուէ՛: Ահա այն ատեն ապահով եղիր թէ կենացդ երկրորդ խնդուածիւնը պիտի ընես և թէ Պօլոս Առաքեալն ալ սուտ պիտի ելնէ:

Գ. Խ.

Ծ Ի Ծ Ա Ղ



ԲՈԺՈՒԿԵԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ



Բոժոժիկեան դեղարանն ներկայ յայտարարութեամբ կուգայ արգոյ հասարակութեան մանաւանդ ազգային դասակարգին ծանուցանել թէ ընդարձակած է իւր գործ եւրոպայէ, դուն հասկցիր Մըլըր չարչըսիյէ բերել սուած թարմ և ընտրելագոյն դեղերով, անանկ որ իր տեսակին մէջ առաջին դիրքը վայելելով պիտի կ'ընայ մրցիլ ի քաղաքս և ի գիւղօրէս քէօշէ—պուճախ տեղուանք բացուած նմանօրինակ... ազօտեան որ և է հաստատութեան մը հետ, ու շատ առիթներ պիտի ունենայ գոհացնելու իր... քսակը, իրեն դիմող... ազգատաց շնորհիւ:

Հաստատութիւնս աւելորդ չի համարիր ըսել նաեւ թէ, դեղագրքի ու պարունակութիւնը ճշգրտութեամբ և խնամօք պիտի պատրաստէ խիստ զիւրաժատելի գիններով, որոնց մէկ քանիններուն օրինակները հոս կը հրատարակէ:

(Զղային տկարութեան համար)

Լիւնայի սր Քեռ (չէլիք թօղու) 1 կրնաւ, օգկասը պէշէ տիր, եփսքեժանսիւն, Չ Տ. (իտար էթաիլի գատար) քի մէկ կուտ իթմէզ, Քեք Տէ քիւլիւ (հապ եաք) ճօնէն սեմֆանք, պիր ըռիալտան (5 ֆր.) աշաղա օլմազ:

(Ստամբուլի տկարութեան համար)

Պի քառայօնաք սր սուս 4 կուաւ, Տիվիլիք քաքու քաֆէ, քեաղըտը իլէ տէյմէզ պիր ադչէ, սօն ֆիլյաթը օլուր եէտիյէ:

(Բորսօքման առաջին տնկելու համար)

Ասրքաք սր քլօնք. 1 կուաւ. տէյշէրի պիր ադչէ պիլէ էթմէզ, օ պէժիքօ լիւնէրալ, շիշէսի պիլէ սն փարայա օլուր մալ, խամսա ըրը թարիֆա վէրէճէքսին:

(Փսիսելու համար)

Թառքու եմէքիֆ, 1 պուղտայ. 100 կուամ գույու սուեու քի մէկ կուտ էթմէզ, շիշէսի տիր սէրմայ, սի, պէշտէն աշաա օլմազ:

(Փորհարութիւն պատճառելու համար)

Սուլքաք սր մանէեզի. օգկասը 60 փարա տըր, 1 օնյա. եանի 8 տիրէմ, պիշ օնյատա 0 սր պիւլէանը, եանի 40 տիրէմ ըրըգ սու, քի մէկ կուտ պիլէ էթմէզ, ֆրանքտան աշաա գուրթարմազ:

(Վէրքը մաքրելու համար)

Սօլիսիօն Քէնէֆէ, շիշէսի տիր սէրմայէ. պիր լագըտը սէքիլ շրուշ վէրէճէքսին:

(Վէրքը շորցնելու համար)

Բոսնոք ս'ալիսօն. Պագալլարտա օգկասը սէքիլէ տիր. պիլիմ տիւքեանտա օթուզ տիրէմի պշիլիյէ տիր: Վալ կիտի գօլա վայ, էսանս սր պեռկաւօք Տէօ կուս, իքի տոմլա պէռկամօթ րուհու իշինէ գարըշտըրըզ վէրիւրիլ պիլ, իքի ֆրանք վէրէճէքսինիլ սիլ:

(Հիւանդ աչքերը լուսւոյ համար)

Օ Պօփէ


Օ Տէսքիյէ (ինպիկտէն կէշմիշ սու) պիլ վէրիւրիլ տիւլ նիլ սու, 300 կրամ,

ասիս պօռիֆ 10 կրամ, պիր զրշ. տըր սէրմայէ, «հատ իտիննուաշար ըրշը թա-րիֆա» եանի օն իքի զրշ. Մըսըր սաղ փարաւ, վէրէճէքսին:

Ծանր հիւանդութեանց յատկացեալ դեղորէից փոխարէն պահանջելիք գիներնիս այս օրինակներէն կրնան գուշակուիլ:

Արդ, Տիարք ընթերցողք, վերոգրեալ դեղորէից գիները ձեր աչքին ՉԱՓԱՌՈՐ երեւցնելնուս պատճառը սա է որ, մենք ալ ձեզի պէս փափաքող ենք ձեր առողջութեանը, ուստի առողջապահութեան կանոնները յարգելով հիւանդանալու չէք. ապա թէ ոչ, արին ձեր ի գլուխ ձեր, առաջ տուններնիդ մեղաքը հանելով ծախեցէք, ետքը հիւանդացէք, քովերնիս եկէք:

Դեղագործ ԲՈԺՈԺԻԿ



— Ելիկում աղա, ձմեռը եկաւ, պատրաստ ես, հարցուց Անդրանիկ աղան.

— Այո, դողալու, պատասխանեց Ելիկում պարպօրէն:

Սրապիոն աղա, բէօմիւր ալտը՞ն մը.

— Կէչէն կիւն պիր պէկիր ալտըմ:

— Գաշա՞ ալտըն.

— Քիօսու օն իքի փարայա:

— Պահալը ալմըշսըն. պարէ էյի չըգտը՞ մը.

— Էվվէթ, ետքտըրաճաղըմըզ պահէ տուվարը իշիւն էբէյիճէ թաշ վէ թօբրագ չըգտը:

— Ինթոս հանըմ, գիտե՞ս, Դեղդիկ հանըմը ինքզինքին համար քանի՞ տարու եմ կըսէ. թամ 35 տարու է եղեր. նէ՛ էվէլ նէ՛ պակաս. ասոր ի՞նչ կըսես.

— Ի՞նչ ըսեմ, պէլքի ըսածը շիտակ է. . . պէլքի ծնելէն 15 տարի ետքը աշխարհք եկած է. . . :

Բիթ—Բիթ աղան դուրսէն ոտքի ձայն առնելով կողակիցը կարթնցնէ.

— Ֆուլիկճան, մէյմը դուրս ելիր, գիտես քի մարգ կը պտըտի կոր.

— Բիթ—Բիթ աղա, գիտես քի երկու հոգով եմ, ինտո՞ր դուրս ելլամ, կը վախնամ:

— Է այ օղուլ, դուն երկու հոգով ես տէ կը վախնաս կոր, ես մէկ հոգիով ինտո՞ր ելլամ. . . :

Վարժարանի մէջ.

Ուսուցիչը — Ամօթ քեզի, պարսն, ես քու տարիքդ ունեցած տտենս քեզմէ հազար անգամ աւելի աղէկ կը կարգայի.

Ուսանողը — Ըսել է որ ձեր դասատուն իմինէս աւելի աղէկ է եղեր:

Քննութեան ատեն.

— Լուծէ նայիմ, «Պօղոս իրեն նուիրուած ոսկի ժամացոյցը մերժեցող, այս նախադասութեան մէջ ի՞նչ է Պօղոս.

— Ապուշին մէկը:

ՀԱՆ ԵԼՈՒԿ

Ունիմ դաշտեր, անտառներ,
Ու այգիներ գեղեցիկ,
Բայց անոնցմէ ոչ մէկը
Կուտայ պտուղ, ոչ ծաղիկ:

Ունիմ լեռներ ու ձորեր,
Խոր քարայրներ, անցաւներ,
Բայց մակարդակ մակերես
Հարթ հաւասար կը տեսնես:

Ունիմ ծովեր, լիճ, գետեր,
Վըտակներ որ ջուր չունին.
Մարգագետինք և հովիտք՝
Որոնք սակայն հօտ չունին:

Ձունիմ տուններ խրճիթներ,
Հըրապարակ, կըրպակներ,
Այլ անոնց տեղ ունիմ շատ
Լայնափողոց քաղաքներ:

(Ա. լուծողին պարգևն է ծիծաղաշարժ
կատակերգութիւն մը հայերէն լեզուաւ):

Արշաւրաճագ

ԽԵՆԴԵՐՈՒՆ ԲԺԻՇԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵ՛Կ ԱՐԱՐ

(Շարունակութիւն)

Գլէ. — (Տայ) Ահաւասիկ:

Բժի. — Սենեակդ քաշուէ՛. ես քանի
մը խենդերու այցելութեան կերթամ.
Հոս չեղած աստեան խենդ մը կամ հի-
ւանդ մը բերելու ըլլան նէ՛ աղէկ մը
կապեցէք որ փորձտնք մը չելլայ:

ՏԵՍԻԼ Ե.

Մարիէթ (ետքը) Ֆրանսուա և Մէրլօ

Մար. — (Մինակ) Քանի մը օրէ ի վեր
մեր բժշկակապէտ Մ. Օվրէ Տօքթօռը
բնութիւնը փոխեր է. իբր թէ ես խենդ
եմ եղեր և ինքը զիս բժշկեր է. կե-
րևի թէ զիս պիտի ճամբէ. այն ատեն
ո՛ր պիտի երթամ, տեղ մը չունիմ,
մէկը չեմ ճանչնար, ճար մը գտնելու
է, ա՛հ, աղէկ միտքս եկաւ, նորէն խեն-
դեցայ ըսելով սկսիմ տանը մէջ եղած-
ները կոտորտել, այն ատեն չթողուր որ
քովէն հեռանամ. (Դրսէն ձայներ) աս աղ-
մակը ի՞նչ պիտի ըլլայ. արդեօք
խենդ մը կը բերեն:

Ֆրան. — (Դրսէն) Ա՛յ ասկէ անդին
չեմ երթար:

Մէրլ. — (Մտնելով) Կալիֆօրնիա չը
պիտի երթանք ա՛:

Ֆրա. — Ամօթ քեզի հօրեղբայր որ
զիս անպատուեցիր:

Մէր. — Ի՞նչպէս, անպատուել ի՞նչ
ըսել է, գեռ հիմա ձեռքերդ քակեցի,
միթէ չնորհակալ չե՞ս, տե՛ս, ա՛յ աղատ
ես. (Մարիէթ) կաղաչեմ օրիորդ, միւսիւ
տօքթօռը հո՞ս է:

Մար. — Ո՛չ, դուրս ելաւ.

Մէր. — Դուրս ելաւ մի՛.

Մար. — Բայց չուշանար հիմա կուգայ:

Մէր. — Եթէ մինչև առաւօտ ալ ըս-
պասել հարկ ըլլայ՝ պիտի սպասենք:

Մար. — (Մէրլօյի) Արդեօք պարոնը...

Մէր. — (Կամաց) Խենդ է օրիորդ,
խենդ է:

Ֆրան. — Հօրեղբայր, ե՛ս մի խենդ
եմ, ա՛հ:

Մար. — (Ետ բաշուելով) Ի՞նչ եղաւ,
ի՞նչ ունի:

Ֆրան. — Օրիորդ, դուք աղջիկ մ'ու-
նիք այնպէս չէ՞:

Մէր. — (Կամաց մը Մարիէթի) Ահա նո-
րէն փախուց:

Ֆրան. — Ներեցէք համարձակու-
թեանս, այն օրիորդը կուզեմ ինծի կին
առնուլ:

Մէր. — Խեղճ տղայ. . . ինձ մօտիկ
ըրէ:

Ֆրան. — Այո հօրեղբայր.

Մէր. — Օրիորդը չկրնար աղջիկ մը
ունենալ, որովհետեւ ինքն ալ տակաւին
աղջիկ է:

Ֆրան. — Ներեցէք օրիորդ, եթէ գիտ
նայիք որչափ կը սիրեմ զինքը, խելքս
թռուցեր եմ, ա՛հ, օրիորդ, եթէ այս
գործը ձեր ձեռքէն գալու ըլլար՝ ա-
նանկ կը կարծեմ թէ պիտի գթայիք
ինձ:

Մար. — Իրաւունք ունիք պարոն,
(Մեկուսի) ես աղէկ մը որոշեցի երկու-
քէն որուն խենդ ըլլալը, բայց հիմա
կու հիմա ձայն չը հանենք: (Մեկնի).

Ֆրան. — Շիտակը, հօրեղբայր, սա
ինձ ըրած անպատուութիւնդ ամենեւին
լուած ու տեսնուած բան չէ. ձեռքերս
կապելով կառք մը նստեցուցիր եւ չի-
տակ բժշկին տունը բերիր, բայց ըսէ
տեսնեմ, ի՞նչ պատճառաւ ասանկ ըրիր,
ի՞նչ կայ:

Մէր. — Մօտիկ ըրէ որ ըսեմ, քեզ
կառք նստեցուցի՝ որպէս զի շուտ հաս-
նինք, ձեռքերդ կապեցի՝ կառքէն վար
չիյնալու համար, բժշկին տունը բերի՝
բժշկութիւնդ գտնելու համար, գոհ չե՞ս:

Ֆրան. — Կոհ չըլլալէս զատ, հիւանդ ալ չեմ:

Մէր. — Հիւանդ չէ եղեր, սըվոր նա յեցէք:

Ֆրան. — Բայց այս տեղին անունը ի՞նչ է, ո՞ւր ենք:

Մէր. — Նելի քաղաքը Մ. Օվրէ բըժըշկին թիւ 47 տունը կը գտնուինք. (Մեկուսի) խենդերը բժշկելու համար ինքն ալ առաջին կարգի խենդերէն մէկն է:

Ֆրան. — Բայց հօրեղբայր, ես խենդ չեմ, խելքս գլուխս է, խօսքս կը ճանչնամ և քու ինչ ըսել ուղեղդ տակաւին չհասկցայ, միտքս հանդարտ եւ ամեն զգացումս տեղն է, զքեզ ապահովցնելու համար եթէ կուզես՝ քանի մը ազդու ոտանաւորներ ըսեմ:

Մէր. — Քաթիկոս անուն փիլիսոփայն ալ ոտանաւորներ կը շինէր, բայց ի՞նչ օգուտ, խեղճը խենդ էր:

Ֆրան. — Կուզես որ Լատիններէն ճառ մը ըսեմ:

Մէր. — Առ այժմ այդ ճառերը պահէ, ուրիշ ատեն կը վառես:

Ֆրան. — Կուզես որ աշխարհագրութեան վրայ ատենախօսեմ:

Մէր. — Է ալ երկան ըրիր ա՛, շատ կը խօսիս կոր, հիմա քթիդ բերնիդ ապտակ մը կը փակցունեմ:

Ֆրան. — Բայց մտիկ ըրէ որ առտուրնէ ՚ի վեր բոլոր ըրածներնիս մէկիկ մէկիկ պատմեմ:

Մէր. — Գրաւ կը գնեմ թէ պիտի սխալիս:

Ֆրան. — Տեսնենք. ժամը Տին սենեակս մտաք, զիս անկողնէս հանեցիք. ես ալ գուլպաներս հագայ:

Մէր. — Հա՛ քեզ նայիմ, ետեւէ ետեւ հագածներդ շարէ:

(Շար.)

Ով որ կը փափագի ունենալ արտասահմանի մէջ հրատարակուած թերթերու հաւաքածոներ, թող գիմէ վառնա Զարպհանէլեան գրատունը, որ կը գտնուին նաեւ 1900ի ամեն տեսակ օրացոյցներ: Պուլկարերէնը սովորեցնող գիրք մըն ալ կը ծախուի դին 7 ուկէս շրուշ:

3



ՓԱՓԱՎԱԾԱՆԿՆԵՐՈՒՆ

Յատկապէս խնամօք պատրաստուած ընտիր երչիկ եւ ապուխտ. կը ծախուի վառնա Մուսալլա, Տ. Ռափայէլ Գարագաշանի նպարեղինաց վաճառատունը: Գին գոհացուցիչ: Քաղաքներէ ու արտասահմանէ եկած յանձնարարութիւնք ալ փութով կը կատարուին:

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆԿՃԵԱՆԻ

ՍԱԼՈՆ ՍԱՆԹՐԱԼ

Մոսալլա

Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան, թէ պէտք եղած ատենը հարսնիքներու եւ խնճոյքներու համար Սալոնը վարձու կը տրուի:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկերազարդ Գերական — Ընթերցարանը: Գին 60 սանդիմ. վարժարանաց համար 100ին 15 զեղջ:

Դիմել սա հասցեով

J. G. BONDJOUKIAN VARNA

Отговорникъ М. Сконовъ
Печатница на Хр. Н. Войниковъ